



**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆՉԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
Դ Ա Տ Ա Ր Ա Ն**

ք.Երևան, Արշակունյաց 24/1 ՆՇԴ/0111/04/16
հեռ. 44-13-00

02.09.2016թ.

Սնանկության գործով կառավարիչ
Անդրանիկ Ելինյանին
/ք. Երևան, Հր. Քոչարի փողոց, 28ջ., բն. 14/

Կից ուղարկվող հայտարարությունը հրատարակել <http://www.azdarar.am> ինտերնետային կայքում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.08.2016թ. վճռով <<Շեն Հոլդինգ>> ՓԲ ընկերությունը /հասցե՝ ք.Երևան, Ծիրակի 2/2, պետ. գրանց. հա. 269.130.01032, ՀՎՀՀ 02201344/ ճանաչվել է սնանկ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 02.09.2016թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Անդրանիկ Ելինյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի կարգով՝ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 08.11.2016թ., ժամը 10:00-ին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի շենքում՝ ք.Երևան, Արշակունյաց 24/1 հասցեով:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԿՈՒԲԱՆՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին

02.09.2016թ.

ք.Երևան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Կուրաբյանն, քննության առնելով սնանկ ճանաչված «Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.08.2016թ. վճռով «Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ դադարեցնելով ժամանակավոր կառավարչի լիազորությունները, ինչպես նաև նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը: Պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 80 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2.1 մասի համաձայն՝ եթե պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պարտապանը և գործին որպես դիմող մասնակցած պարտատերը ժամանակավոր կառավարչին տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակելու դեմ առարկություն չեն ներկայացնում, ապա դատարանը կարող է որոշում կայացնել տվյալ սնանկության գործով ժամանակավոր կառավարչին կառավարիչ նշանակելու մասին:

Նկատի ունենալով, որ պարտապանը և գործին որպես դիմող մասնակցած պարտատերը ժամանակավոր կառավարչին տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակելու դեմ առարկություն չեն ներկայացրել, և որ ժամանակավոր կառավարիչ Անդրանիկ Ելինյանը բավարարում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներին, գտնում եմ, որ Անդրանիկ Ելինյանին պետք է նշանակել «Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ:

Նլեկով վերոգրյալից և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա), բ), դ) և զ) կետերով, 20-րդ հոդվածի 5-րդ մասով, 22-րդ հոդվածի 2.1 մասով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ, 144.1 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սնանկ ճանաչված «Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ նշանակել Անդրանիկ Ելինյանին՝ դադարեցնելով ժամանակավոր կառավարչի նրա լիազորությունները:
 2. Կառավարչի վարձատրության ամսական չափը սահմանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
 3. Պարտատերերի առաջին ժողովը նշանակել 08.11.2016թ., ժամը 10:00-ին, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի շենքում (ք.Երևան, Արշակունյաց 24/1):
 4. Հանձնարարել կառավարչին ոչ ուշ, քան սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել <http://www.azdarar.am> ինտերնետային կայքի միջոցով և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում:
 5. «Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերության տնօրենին պարտավորեցնել 10 օրվա ընթացքում կառավարչին ներկայացնել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը:
- Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահին և կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում: